ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաուլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հունիսի 2020 թվականի N 21/1

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը, ի հավելումն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 21-ի N 34 որոշման՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի տրակտորի համար խոփ ձեռք բերելու նպատակով տրամադրել լրացուցիչ 5 000 (հինգ հազար) դրամ գումար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 8
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2020 թվականի N 22

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0103-0092 ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի տալ հետևյալ հասցեավորումը՝ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 77:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 15
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2020 թվականի N 23

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0025-0020 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանման հատակագծի առանձնացվող 0,06998 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տիգրան Մեծի 3 փողոց, թիվ 2/1, իսկ մյուս՝ 0.03002 հա հատվածին հետևյալ հասցեավորումը ՝ Տիգրան Մեծի 3 փողոց, թիվ 2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 16
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2020 թվականի N 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 591 որոշումը՝ որոշում եմ.

1. Հաստատել Արմավիր մարզի Մուսալեռ համայնքի զորահավաքային մարմնի կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի զորահավաքային մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 16
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի զորահավաքային մարմնի (այսուհետ Մարմին) կանոնադրության (այսուհետ Կանոնադրություն) նպատակն է սահմանել այդ մարմնի իրավունքներն ու պարտականությունները, ենթակայությունը, խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

2. Մարմնի իրավասություններն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինը:

3. Մարմինն իր աշխատանքային գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ու անմիջական ղեկավարի որոշումներով, որի վրա վրա անհատական պատասխանատվություն է դրված զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կազմակերպման և իրականացման համար:

II ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4. Մարմնի պարտականություններն են խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

5. Զորահավաքային նախապատրաստության խնդիրներին համապատասխան՝ համայնքում ստեղծված զորաավաքային մարմինը տվյալ բնագավառի զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում է՝

1) զորահավաքային նախապատրաստության համակարգի ղեկավարումը

2) զորահավաքային նախապատրաստության մասով սահմանված զորահավաքային առաջադրանքի կատարումն ապահովող զորահավաքային պլանի մշակման աշխատանքի կազմակերպումը

3) զորահավաքային նախապատրաստության մասով պաշտպանական պատվերի (առաջադրանքի), ինչպես նաև համապատասխան պայմանագրերի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը,

4) սահմանված կարգով համայնքապետարանի ղեկավար կազմի, անձնակազմի և մասնագետների ամրագրման աշխատանքների իրականացումը,

5) զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը վերադաս ղեկավարությանը

6) զորահավաքային առաջադրանքների (պատվերների) կատարման և խնդիրների իրագործման ժամանակ զորահավաքային պլանների համաձայն կազմակերպություններից կամ քաղաքացիներից շենքեր, շինություններ, հողամասեր, գույք, տրանսպորտային և այլ

նյութական միջոցներ վերցնելու, ինչպես նաև նրանց տնտեսական գործունեության ուղղությունը փոփոխելու ժամանակ համապատասխան ակտեր կազմումը
7) զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի վերաբերյալ գործող օրենսդրության պահանջների կատարումը
8) զորակոչային և զորահավաքային համալրման մարզային ստորաբաժանման հետ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարում փոխգործակցության միջոցով
9) զորահավաքային նախապատրաստության, ինչպես նաև ռազմական դրության պայմաններում համայնքի տարածքում հակահամաճարակային միջոցառումների վերահսկում
10) զորահավաքային նախապատրաստության ոլորտին առնչվող այլ աշխատանքների իրականացում:

6. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում իրականացվում է հետևյալ միջոցառումները
1) քաղաքացիական պաշտպանության պլանների մշակում և մասնակցություն դրանց մշակման աշխատանքներին
2) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի և համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների քաղաքացիական պաշտպանության գծով ուսուցման կազմակերպում
3) վերադաս կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ժամանակ համապատասխան կապի միջոցով ապահովման աշխատանքների համակարգում և վերահսկում
4) բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարման նկատմամբ վերահսկողություն
5) առևտրի և սննդի նյութատեխնիկական մատակարարման գծով իրականացվող գործառույթների համակարգում և վերահսկում
6) համայնքից տարահանված բնակչությանը, համայնքի վարչական տարածքում գտնվող օբյեկտներին պատկանող անշարժ և շարժական գույքի պահպանման վերահսկողության իարկանացում
7) քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող այլ հարցերի համակարգում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում

7. Մարմինը իրավունք ունի՝
1) առաջարկություններ ներկայացնելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.
2) իր իրավասության սահմաններում խորհրդակցություններ հրավիրելու.
3) իր իրավասության սահմաններում համակարգելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները:

III ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Մարմնի կառուցվածքը և կազմը որոշվում են՝ ելնելով զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնույթից և ծավալից:
9. Համայնքի զորահավաքային նախապատրաստության աշխատանքների համակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի

համայնքապետարանի աշխատակազմում համայնքի ղեկավարի գլխավորությամբ ստեղծվում է համայնքի զորահավաքային մարմին:

10. Մարմնի գաղտնի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

/ Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան.

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավար՝ համայնքի զորահավաքային մարմնի ղեկավար

Հայաստանին Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արմավիր համայնքի զորահավաքային մարմնի ղեկավարի տեղակալ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արմավիր համայնքի զորահավաքային մարմնի քարտուղար

Զորահավաքային մարմնի անդամներ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / պաշտոնի ծածկագիր՝ 3.1-4/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /պաշտոնի ծածկագիր՝ 3.1-1/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / պաշտոնի ծածկագիր՝ 3.1-2/

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունիսի 2020 թվականի N 25

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը, 2020 թվականի հունվարի 31-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 18
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի
N 25 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Ծնված երեխաների ծնողներին դրամական օգնություն տալու

Հ/Հ	Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը	Երեխայի ծննդյան օրը	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Դավթյան Նարե Պետրոս	25.05.2020թ.	Դավթյան Պետրոս Վաչիկի	30 000
2	Բաբախանյան Էդիտա Կարենի	21.05.2020թ.	Բաբախանյան Կարեն Էդվարդի	30 000
3	Ռոստոմյան Արա Գևորգ	05.06.2020թ.	Ռոստոմյան Գևորգ Արայի	30 000
4	Ղազարյան Մարիա Դանիել	12.06.2020թ.	Ղազարյան Դանիել Վարուժանի	30 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի
N 25 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

Հ/Հ	Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը	Մահվան ամսաթիվ	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Սարգսյան Արաքսյա Պարգևի	11.06.2020թ.	Վարդանյան Հարություն Վազգենի	50 000
2	Բարսեղյան Ջեմմա Բախշիբեկի	17.06.2020թ.	Ազատյան Հովհաննես Համլետի	50 000
3	Մարտիրոսյան Հովհաննես Մեհրաբի	31.05.2020թ.	Մարտիրոսյան Սեդրակ Հովհաննեսի	50 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2020 թվականի N 26

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետի 22.07.2005թ. թիվ 7 որոշումը, Արթուր Օհանյանին «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 2019 թվականի փետրվարի քսանին տրված ըստ օրենքի ժառանգության 1477-ով սեղանամատյանում գրանցված /ժառանգական գործի համարը՝ 54/2019/ վկայագիրը, հանգուցյալ Հարություն Օհանյանի մահվան վկայականը /ԱԲ№ 083126, տրված 26.12.2011թ./ և Արթուր Հարությունի Օհանյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Վերաձևակերպել հանգուցյալ Հարություն Օհանյանի հետ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 3.03 հա գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալված հողամասի վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը /հիմք՝ Վաղարշապատ տարածքի նոտարական գրասենյակի կողմից 12.10.2005թ. սեղ. 611 հաստատված պայմանագիր/՝ հանգուցյալի ժառանգը հանդիսացող Արթուր Հարությունի Օհանյանի անունով:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 19
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» հունիսի 2020 թվականի N 7

«ՄՈՎՍԵՍ ՏԵՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿԻ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՐԿԱԴԻՐ ՊԱՐԱՊՈՒՐԴՈՒՄ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 12.06.2020թ. N 44 որոշումը՝ կարգադրում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմին 2020 թվականի հունիսի 12-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 21-ը ներառյալ համարել հարկադիր պարապուրդում:
2. ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանին կատարել սույն կարգադրությունից բխող իրավական գործառույթներ՝ աշխատակազմի անդամների աշխատավարձի բաշխումը կատարելով համապատասխան օրենքի շրջանակներում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 12
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» հունիսի 2020 թվականի N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՆԱՐԵԿԱՑԻ ԵՎ ՄՈՒՇ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կարիքների համար Մուսալեռ համայնքի Գ. Լուսավորիչ, Նարեկացի և Մուշ փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Հովհաննես Թովմասյանին, իսկ գնումների համակարգող՝ Լուսինե Ալեքսանյանին:
2. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 15
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» հունիսի 2020 թվականի N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՆԱՐԵԿԱՑԻ ԵՎ ՄՈՒՇ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 26-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Գ. Լուսավորիչ, Նարեկացի և Մուշ փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման գնման պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտը, որոշում եմ

1. Ստեղծել «ԱՄ ՄՀ ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 15
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի
Ն9 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ

«ԱՄ ՄՀ ԳՀԱՇՁԲ-20/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Հովհաննիսյան – ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռ համայնքի ղեկավար

Հանձնաժողովի քարտուղար՝

Լուսինե Ալեքսանյան – ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի անդամներ

Սիմա Հակոբյան - ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

Մարինե Սարգսյան - ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

Նորայր Գրիգորյան - ՀՀ Արմավիր մարզի Մուսալեռի համայնքի ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«29» հունիսի 2020 թվականի N 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՈՀԱՐ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով 27.06.2020թ. տրված սերիա AF N 043850 անաշխատունակության թերթիկը և Գոհար Սայադյանի դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին 2020 թվականի հունիսի 29-ից հատկացնել հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր տևողությամբ (70 օր հղիության և 70 օր ծննդաբերության):
2. Գոհար Սայադյանի աշխատանքային պարտականությունները դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Լուսինե Ալեքսանյանի վրա:
3. Գոհար Սայադյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի նոյեմբերի 14-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունիսի 29
գ. Մուսալեռ